Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

969

Հիկոզայոս

9(47)
Ա-70հ.

Լուսաբեր

1855

9(47)
Գ-70հ

ՅԵՏԻՆ ԺԱՄԱՆԱԿԵՑԻ

ԿԱՅՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Զոր
Ի Ռուս լեզուէ փոխեալ ի Հայ
Դասատու Արծնակոն ազգնոց
Մարևելեան լեզուաց Ճեմարանի
Տեսչի Լազարեանց,

Մագիստրոս և Աստեղ,
Մոսկ Դէրէֆոյէան Մոսկէանց։

Ի ՄՈՍԿՈՒԱ
—
1855.

37411-57

9(47)

38455-Ա.Հ.

Печатано съ ВЫСОЧАЙШАГО соизволенія.

2004

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ Անվ.
им. А. Мясникян

Ի Տպարանի Արևելեան Լեզուաց Ճեմարանի Տեարց Լազարեանց։

ՅԵՏԻՆ ԺԱՄԱՅ ԿԵՆԱՑ

ԿԱՅՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱՌԱՔՆՈՅ

Երանի՛ մեռելոցն, որք ՚ի Տէր նենջեցին։

Յայտ. ԺԴ. 13։

Յորժամ մեծ ինչ պատահիցէ մեզ կորուստ, կորուստ առեմ այնպիսի՝ որոյ սնհնարին իցէ յաշխարհիս ասա վերստին գիւտ, և յորժամ տրտմականօքն յաւէտ զգածեալ իցէ սիրտ մեր ըստ մարդկեղէն բնութեանս պայմանի, առաքէ մեզ ՚ի բարձանց Աստուածանման Տնչութիւն կրկին ապդս մխիթարութեանց, յորոյ զմին մաքրի է կոչել ստորին կամ երկրաւոր, և զմիւսն՝ վերնական կամ երկնային։ Առաջ-

նոյն սակի են՝ հաւատալք անկեղծութեան առ 'ի բա-
րեկամաց մեզ ցուցեալք, կարեկցութիւն հասարա-
կաց ընդ մեր վիշտս, բարեբաստիկ աւուրցն անցելոց
յիշատակք, և հուսկ ապա պանծալին այն յոյս՝ լիծ
ունին նոքա անդր եւ քան զշիրիմ (*) բարեբաղդք
մեզ հանդիսանալ մարդասիրապէս ընդ ձեռն այնո-
յիկ, որք երբեւ 'ի ժառանգութիւն վնասոյն ընկալան
զոգի՝ զզգայմունս և զխառնուրդս: Այլ միթիթա-
րութիւնքն՝ զորս երկնայինս մեք իշխեցաք անուանել,
աներկեւանք եւս են և դեր 'ի վերոյք: Խովանդակին
այնոքիկ 'ի միութիւն անդ 'ի տիպարին և միանգամայն
'ի զուարճախառն մտածութեանն զայնոյանէ՝ յորոյ
մեքս անջատեցաք, այլ և 'ի հոգեպէսն կցորդութեան
ընդ վիճակելոյն այլում՝ լուսազունի կենաց, մնա-
ւանդ յոլժամ՝ նորս այս կեանք՝ յառաջ քան զերն
նոցա յաշխարհէս՝ յաչս մեր երեւութանայէ, և յոր-
ժամ՝ նոյն խակ վայրկեանք՝ քան զմահն նախաժամանք՝
բանայցեն առաջի մեր զամենայն դանձս քրիստոնէա-
կան առաքինութեանց հոգւոյ վախճանելոյն: Կեանք
բարի՝ բարեգունառ վարձատրի մահուամբ. և մեք
զայնոյանէ՝ որոյ զնոյն պարգևեն երկինք, առապաք ընդ
Աստուածաբանաբերդ Տիրամաղին «Երանի՛ մեռելոյն, որք
'ի Տէր նեղջեալն«. զի նոքա մեռանելով՝ զանեալքական
կենացն և զերանութեան առնուն զնաշակ: Զայսո-

(*) Իսկ՝ յետ մեռնելոյ յատեանցս:

ընտակ վախճան տեսաք մեք 'ի գերսածայր սահմանի երկրաւոր մեծութեան 'ի 18 Փետրուար ամսոյ ներկայ տարւոյս, յայնմ 'ի դառնաբեր աւուր՝ որ չէ՛ երբեք մոռանալի։ Արեւանէր Կայսրն Ռուսիոյ, այն՝ որոյ ընթացեալ տարածեալ էր անուն ընդ տիեզերս, այն՝ առ որ ուղղեալ ձգէին հայեցուածք ոչ միայն վերոյ հաղորդեալ բիւրուց (*) հպատակաց, այլ և ամենայն այլասեռից ազանց և Պետութեանց։ Նա յայսմ դիպուածի՝ որ դղրդիչն է մտաց և սրտի, կայր և այլ ինչ որ ուժգնագոյնս ազդէր, այն է՝ ընդդէմ յառկութիւն ազգ Թագաւորին։ Արեւանէր նա որպէս արդարև արժանաւոր զաւակ սերեալ յարենէ Արծին Պետրոսի, ընդ նմին՝ և որպէս արժանաւոր որդի և արժանաւոր Ադամ եկեղեցւոյ Քրիստոսի։ Համարձակիմք ասել, թէ անդրդուելի և անվրդով հաստատութիւն մտաց Արքային և Օրէնսդրին, խարհրդածութիւնքն զկարեւորագոյն և զծանր ծանր պարտուց պաշտամանն Միասնոյն, (զոր ելից նա արժանապէս յընթացս երեսնամեայ կառավարութեան Պետութեանն), հուսկ ամենայնի՝ և զորոյ սէրն առ մերձաւորագոյնն և մեծ զերդաստան Իւր (առ Ռուսիա), յայտնի վայրկեանս ամփոփեցան կենդրոնացան զուգեցան 'ի մի, այն է՝ 'ի զեր 'ի վերոյն քան զամենայն՝ 'ի սրբարար նեղոգածութիւն Հաւատոյ։

(*) Որ է 60,000000։

Դիտէր նա անահ 'ի մերձ ընդ մերձ զալուստ մահուն. քանզի զիտէր՝ թէ ճանապարհ և ելթ է այն առ ճըշմարիտն կեանք։ Ո՛չ խռովեցուցին զսրտի նորա և յոյզք խորհրդոց զմնայելոյն զկնի Նորա՝ զ'ի սրտէ սիրելեացն՝ զՄ.մուսնոյ, զզաւակայ, զթոռանոյ, և զհայրենեաց։ Դիտէր նա նոյնպէս՝ թէ ուր զնոսա յանձն առնէր. զիտէր՝ թէ ընդ նոսա ունին լինել վերնական խնամոյն շնորհք, յիշատակք գործոց նորին և արդեանց։ Ա.յս վայրկեանք՝ զորս անշուշտ և ամենայն ոք ընդ մեզ հանդիսացոյնս համարի, նկարագրեալք են արդէն ըստ մասին 'ի մեր լրագրս և յօտարացին։ Դայց, որպէս ասացաք, 'ի վշտանալ մեր ընդ կորուստն՝ որ պատահեցէ յայսմ՝ աշխարհի, զհաւատին և զեկեղեցական դասեալք զսիրելիս 'ի դարձուցանելն մեր զուշ մնաց մերոյ առ նոսա, և 'ի յիշել զնոցուն զընդաբոյս ձիրս ոգւոյ՝ որք հիացուցին մեզ առքերեն խաւն ընդ բերկրութեան։ Ա.յսոքիմբք խորհրդածութեամբք և յիշատակօք դարձ առ մեզ առնէ, թէ և վայրիկ մի, կորուստն այն, նորոգի՛ դարձեալ որ մահուամբն լուծաւ՝ յօդակապ։ Ա.ռ այսր աղագաւ հաստատեցաք մեք 'ի մտի 'ի միսիթարութիւն մեզ և ընթերցողաց և ամենայն Ռուսաց զմիանգամ՝ գրեալսն երկրորդել, և զթերին ինչ զՆկարագրի յետին ժամուց Կայսեր Նիկողայոսի։

Ա.յսպիսում՝ քաջալաւ և անզուգական կենաց վախճան եղ հիւանդութիւնն պատճառեալ 'ի ցրտոյ (grippe), որ թէ և զառաջինն թեթև ինչ թուէր

կամ՝ ոչինչ, այլ ապա յուրաւ զոլ մնահաբեր. զի ըստ բազմին ձախողելոյ՝ և այլ ախտք՝ ի վերայ եկին, ախտք՝ որ՝ ի վաղուց հետէ թաղուցեալ կային՝ ի մարմնի Ցորա՝ քաջառողջ և ամրապինդ ըստ երևութի ելեալ, այլ նրօք՝ ճնշելոյ և պատասելոյ՝ ի տարապայման վատառելոյ՝ ի հոգոյ և՝ ի զբաղանաց, որք սեպհական են ամենայն վիճակի մարդկան, առաւել ևս՝ Ամբարձելոցն՝ ի Գահոյս։

Թագաւորն՝ ի Տէր հանդուցեալ, որպէս յայտ է որոց առ Ցմա կային՝ ի ապատու, յայսմ՝ ի վերջնում ամի կենացն զգայր զրնթէ օր ըստ օրէ յանձն իւր ըստատականալ ախտին. սակայն ոչ կասէր՝ ի հանապազորդելոյ անգուլ ճգմամբ՝ ի գործս կառավարութեան՝ ըստ ցայգ և զցերեկ՝ ի նոյնս վատառելոյ, և ասէր ևս՝ ի հանգստանէ փնոյ՝ որ՝ ի կարի կարևորայն է՝ զանձն զրկելով, մանաւանդ՝ ի վերջին աւուրսն՝ յորժամ ըստբոլանդակ զուշ մնացն դարձուցանէր՝ ի պատրաստութիւն հնարիցն պաշտպանութեան ընդդէմ՝ յոգնութիւն թշնամեաց՝ անկարծ ուրեմն յարուցելոյ՝ ի վերայ Ռուսաստանի և ուղղափառ հաւատոյ. Նայց ոչ որ՝ ի սկզբան անդ, և զրնթէ յամենայն խիզ ժամանակս այսր վերջնոյ հիւանդութեան Թագաւորին, համարէր զայն՝ վտանգաւոր, և ոչ խիզ ինքն Թագաւորն այնպիսի ինչ ածէր զմտաւ, թէ և ըստ Բրիտանական պարտուցն, զուցէ և ըստ առանձին կարգաւորութեան մացն, ՝ի վաղնջուց հետէ խա-

կայր սակայ 'ի սրտի իւրում զոր մահուն, որպէս և 'ի Կառակալլին՝ որ 'ի Նմանէն թագաւ՝ տեսանել ակնարև։ Թագէտ և խօսէր բազում՝ անպամ և զկենաց, համայն և այնպէս ոչ եկեաց ընդ երկար։

Ոչ ինչ առաւելապոյն վայելի զգուշութեան ելոյց Թագաւորն զառաջութենէ անձին Իւրոյ, թեպետ յայն սակս և եթ՝ զի բնաւ ամենևին չունէր ինչ կասկած զվտանգէ, կամ զի՝ որ հաւատացեալն է՝ առ չվերդելոյ զանդրդութիւն սիրելի հպատակաց Իւրոց։ Այս վերջին պատճառ է՝ որ ետ Նմա ապրելու և զոպակրութիւն լրոյ հիւանդութեանն։ Հիւանդութիւնս այս 'ի վերջին օրէ անտի Յունուարի 19 Փետրուարի պէտպէս ընկալաւ փոփոխմունս։ 'Ի նմին աւուր զգաց յանկարծ Թագաւորն զայնպիսի ինչ դիւրութիւն 'ի ցաւոյն, զի և 'ի մտի եդ դնալ տեսանել զկուսակս զչրայն պատրաստելոյ 'ի չու։ Որ առ Նմայն էին յայնժամ բժիշկք՝ ընդդէմ կային այսմ խորհրդոյ։ »Ոչ այդպէս զգուշաւ միտ դնէիք Դուք հիւանդութեան Իմում՝, ասաց Նա նոցա ընդ կատակս, եթէ զինուոր լոկ լեալ էր իմ։« »Ոչ, Զերդ Սրեծութիւն, պատասխանի ետուն նմա, մեք յայդպիսում վիճակի ջատագոք թագել և լոկոյ զինուորի 'ի հիւանդանոցէն 'ի դուրս գալ«։ — Յաւել ևս ասել Թագաւորն »Դուք յայնժամ զձեր հաստատեցէք պարտս, արդ երթամ՝ և ես զինձ հաստատել«։ Այսպիսիք էին կարգաւորութիւնք Նորա։ 'Ի համօրէն յամբա-

ռածուած Թագաւորութեանն՝ առաւել քան զամենեսին Նա ինքն Կայսրն էր՝ ամենայն Ճշդութեամբ և և խնամով յանձանձիչ լիսոյն սրբութեան։ Հանդերձ այսպիսեաւք՝ գուցէ և սկսա Նորա՝ ըստ գաղանի խմն նախապատրաստութեան՝ յանկոյր դամի մի ևս տեսանել զկնոջ զՀաւատարիմ զօրականաս, որք վասն Նորա և վասն Հայրենեաց եղեալ էին 'ի մահ կամ 'ի յաղթութիւն։ Բայց այսպիսաբար անպէտ եղեալ Նորա 'ի տանէ՝ որ երկրորդեցաւ և 'ի յաջորդ աւուրն ('ի 10 Փետրուարի) ստուգագոյն վերպրօծութիւն առաջնոյ ցրտահարութեանն։ Յոր յաւելան և ոտնառութեան ախտին զայրույթ, և կաշկանդումն, և 'ի ձախաւ կողմանն թոքոյն 'ի վեր երևեցաւ շարժողական զօրութեանն դադարումն։ Եւ այնպէս խակ ապա Ճարտկեցաւ փոյթ ընդ փոյթ յաւն 'ի ժամն։ Սկիզբն արարեալ էր Թագաւորն ապաշխարելոյ՝ ըստ Իւրում՝ սովորութեան՝ յառաջնումն եօթնեկի (մեծի) պահոյ, 'ի պատրաստութիւն Հաղորդութեան Ս. Խորհրդոյ ընդ հանայն Օգստոսիան Գերդաստանի Իւրում։ այլ ոչ կարացեալ 'ի նոյն հանապազորդել՝ հարկեցաւ 'ի 11 Փետրուարի յաւուր Ուրբաթու ընկողմիլ 'ի մահիճս, և ոչ ևս յարեաւ յանկողնոյ։ Բայց և յայնպիսումն վիճակի չդադարեցոյց զաշխատութիւն իւր՝ որչափ հնար էր՝ 'ի գործս Կառավարութեան։ Սեռանէր 'ի Գահոյս։ 'Ի 17 Փետրուարի այնչափ խմն առաւելաւ և և ամենևին՝ յուսաւ վասանն, մինչև բժշկոյ անպատ՝

որ կային առ Թագաւորին՝ հարկ եղև ազգ առնել զայնմանէ Յառանգի Գահուն։ Ի՝նչ ոճն և եղծ 'ի բժշկայ չև՛ էր հատեալ 'ի ապառ զոյսն։ Իսկ յերեւկոյանալ աւուրն՝ և վերջինն այն բարձաւ ակնկալութիւն։ Կամք եղեն Կայսերորդւոյն՝ վշտագնելումն 'ի սարսափածին 'ի մահագոյժ համբաւոյ ատի՝ ծանուցանել զայնմանէ Օգոստա Որ իւրում։ Եւ 'Նա՝ որոյ կարեվէր խոյմանն սրտի և մորմոքանայ (որպէս ինքն ասէր) չդոյր օրինակ, անդէն իսկ յաղխտաշարժն 'ի պահու զամուսնոյ Քրիստոնէի յուշ եբեր զպարտս։ և իբրու զնոր ինն զգեցեալ զօրութիւն՝ զոր Հաւատն և եղծ տայ, չոգաւ վճարել զայն առ անկողնով Օրհատականին (*)։

Ի՝նչ դեռ ակն ունէր Թագաւորն դալստեան Կայսերուհւոյն, եմուտ Սա առ 'Նա, և զիրկս զգլխովն արկեալ՝ ասայ մեղմօրէն իւրովն հեզիկ խանդաղատանօք։ »Ընձկալիդ իմ՝, չկարայեր 'Դու զապաշխարանսդ՝ »զոր սկսեալն էիր՝ աւարտել, և՝ որպէս միշտն առ»նէիր՝ հաղորդիլ ընդ մեզ 'ի միասին 'ի Ս։ Խորհր»դոյն։ Ընդէր ոչ չկատարել զայդ այժմիկ։ 'Դու »ինքն դիտես՝ զի Քրիստոնէի չինք այլ դեղ լաւագոյն։

(*) Ասէր առեալ Կայսերուհին։ »Զարմանամ՝ ընդ փոքրոգութիւն այնոցիկ՝ որք չկամելով երկեցուցանել զՏիւանդն 'ի քանի մի կարճատև վայրկենի ատի կենացս, զրկեն զնա 'ի մխիթարութենէն՝ որ պարգևի որոյ զԹոշակն ընդունին զյաւիտենական կենացն Ճանապարհի։

»և զի ոչ սակաւք 'ի յաւարէնելոց հիւանդաց դիւրա-
»թիւն անձանց գտին՝ զՍ. Խորհուրդն ընդունելով«։
»Իբր, յանկողնւոջ, անդէն վաղվաղակի զընդդէմն ած
»'ի վերայ Թագաւորն, անհնարին է։ Այս պատրաստ եմ
»և յանկամ վճռել զպարտս զայս, բայց յոտին կա-
»լով, յորժամ տայէ ինձ Աստուած թեթևութիւն
»'ի յաւոյ։ Մի թէ մաքրիթ եղէ ինձ կողմանեալ 'ի
»մահիճս և անզգեստ՝ առ այնպիսի մատչել Խոր-
»հուրդ ահաւոր«։ Այսչափ ահա խորագոյն ընծայէր
նա յարգանս՝ Սրբութեանց։ Լուեաց Կայսերուհին՝
արտօսր յաչսին թորելով։ Քաղեցան զորութիւնք
հոգւոյ նորա։ »Մի թէ այդչափ 'ի վտանգի եղեմ
ես, եհարց Թագաւորն, և անդէն լուռ եկայ, զի մի
հարցմամբս այսուիկ ահ 'ի սիրտն արկանիցէ Աստու-
ծոյն։ Օրինակ զայս ահա զգուանօք և հեզահամբոյր
մեղմութեամբ զուշանային նորա միմեանց փոխադար-
ձաբար։ Եւ հաւատիցն իսկ այսպիսւոյ ամուսնական
խանդաղատանաց՝ որք քաղցրացուցանէին զամենայն ա-
ւուրս երջանկապատակ կենդանութեան նոցա, երևե-
ցան և 'ի վերջնումն անդ ժամանակի։ Յետ ընդունե-
լոյ Կայսերն զՍ. Խորհուրդն, ասաց ցնա Կայսերուհին՝ զիրկս նմա արկանելով։ »Սիրեմ զքեզ, որ-
»պէս յառաջն (սիրէիր)«։ — »Սիրեմ, պատասխանի
»ետ նա, և կարիցեմ իսկ չսիրել։ Այն ինչ մեք յա-
»ռաջնում նուազի միմեանց հանդիպեցաք տեսոյ, ա-
»սաց ցնս սիրտ իմ։ ահա Գոյդ Հրեշտակ Պահապան

»յամենայն 'ի կիսանդ։ Եւ յանդ եկ անվրէպ ասել-
»ցուք թիւն ոստոց«։ Զոյնն ասուցեալ և 'ի նմին նա-
խընթացմաց վայրկենի առ 'ի մէնջ նկարագրելոյ, կատար-
մամբ գործոյն՝ որ չէր ինչ թեթև։ Արկրաւորն այն՝
առ ՅԱստուծոյ պարգևեալ Պոհոսպան Հրեշտակ Աստ-
ուած, յուշ ած Զնա՝ մինչ մնաց առ դուրս կայր՝ վրե-
ծատքանչն Խորհուրդ, որ 'ի կիսանն սանի յուխտե-
նակոնս։ »Լա՛ռ Դու, Եհոլոյ Թագաւորն«։— »Ոչ,
պատասխանի Եռ Աստուածուհին, քանզի և ինքն խակ
զբայը ունչ՝ զարտասուայն հասուցիս։ Եւ ապաչեայ զի
թոյլ տայցէ օգնել Զնա յաղօթել։ զի 'ի տկարանալ
զօրութեանն՝ չմարթէր ազատօրէն և կատարելապէս
լշխնել Իւրոյն ժամայ։ Սկսաւ կարդալ կիսաձայն զգե-
բարձանցարդոյնն քան զամենայն ազօթս՝ զուանդեալն
մեզ յերկրի 'ի նոյն ինքն 'ի Զարչարելոյն վասն մեր՝
և 'ի Զնողէն զմեզ Իւրոնն արեամբ։ Այսրն՝ որ պատ-
ուական էր յանդիման լինել Զնա, ազօթակից լինէր
անուանչ և յարժամ ասայ Աստուածուհին »Աշխարհ
կոչ ցս«, յաւել և ինքն ուժգնաբարբառ »Այո՛, յա-
ջեանցն ի յաջեանցն ժամ«։ Այսպէս և 'ի վերջնումն ա-
ռաւ կենայ (Իւրոյ) խոնարհեցաւ Արքայն Քրիստոս
նեայ առաջի անհասանելի կամայ Հօրն Արկնաւորի։

Թագաւորն արձակեայ յիւրմէ զԱստուածուհին՝ ա-
ղաչելով զնա կալ 'ի հանգստեան։ Բայց ի կարէր
յայնպիսում 'ի ասկալի ժամու 'ի ինդիր լինել հան-
գըստեան։ Որք էին 'ի Ս. Փեթերպուրկ Խորհրդա-

կանք և Գոլծակալք Արքայական Տանն՝ յետ կնոջ ղեշերոյն ժողովեցան յաղօթել 'ի վոքրիկ մատրան Ձմերայնոյ Պալատան (*). և 'ի նմին իսկ զոգոյս ժամանակի սոսկականք ոմանք 'ի հպատակաց Միապետին յոգեվարի եղելոց, յառնուլն և ելթ զլուր վտանգաւոր հիւանդութեան Նորա, զարթուցեալ 'ի քնոյ զվի ոմն 'ի քահանայից Առաջ եկեղեցւոյն Բազմանաբի անուանելոյ՝ ետուն լծախանձանօք բանալ զեկեղեցին, և հարուստ և ձիգ ժամս արտասուաղոչ պաղատանօք յաղօթս կային ընդ նմին ինքեան արժանապով բեմական։

Սակայն հաճոյ եղև Աստուծոյ կոչել առ ինքն զՕծեալն Իւր։ Յերկրորդում ժամու զիշերոյն, Պալատական Բժշկապետն (**), զոր Կայսր հանդուցեալ՝ արժանացուցեալ էր առանձին լմն մտերմութեան, տեսեալ՝ թէ չգոյ յոյս ապրելոյ հիւանդին և սուղ մի ժամանակ, շարժեալ՝ միանգամայն և քստմնեալ՝ յահաւորութենէ ախրական հարկի պաշտամանն (զորմէ և մի ոմն 'ի հաւատարիմ՝ պաշտօնէից Կայսեր զեկուցեալ էր նմա յայտ՝ վայրկենի մատնաւոր թողթոմն՝ զոր ապ յապոյ գրեալ էր 'ի շտութս անդ արկածելոյն), եդ 'ի մտի զամենայն ինչ յայտնել անպատրաստակ՝ նմին ինքեան Յոգեվարին։ Ոմանցուս սիրտ նորա՝ յարժամ եմուտ նա 'ի վերջնում՝ նուապի յան-

(*) Зимняго Дворца.
(**) Лейбъ-Медикъ.

պաճոյճ և յանձուկ առանձնարանն՝ որ եղեալ էր յայնժամ տեղի ննջելոյ Ն.յեմ՝ որ հրամանատուն էր կիսոյ մասին աշխարհիս։ (Օմտաւ ածէր), ուստի սկիզբն առնիցէ խօսիլ, և զնամրդ զերկեղականն արտասանիցէ բան զի վերայ եկելոյ օրհասէն։ Գիտէր նա զհաստատութիւն հոգւոյ Թագաւորին. բայց զի-տէր նոյնպէս՝ թէ չհամարի Նա զանձն 'ի վտանգի, և չկարծէ՝ թէ այնպէս մերձ իցէ մահն, թէ և իբրև Բրիտոնեայ ջանայ հանապազ պատրաստ զոլ առ այն։ Կամք այն էին Բժշկապետին՝ զի բաղձանքն հաղորդելոյ 'ի Ս. Խորհրդոյն՝ ինքնին ծնցի 'ի միտս Թագաւորին։ (Նին իրի) սկսաւ պատմել Նմա զհանդիպել իւր՝ Խոստովանահօր Նորա՝ իւրումն պատուական և հին բարեկամի (*). »Ընդարձակ այր պատուա»կան է նա, այր բարեբաւ, ասայ Թագաւորն։ Ամբ»ծանօթ այսպէս դուք նմա«։ — »Դ նեղութեան ժա»մանակի, պատասխանի ետ Բժիշկն, այն է՝ յաւուրսն »յետին հիւանդութեան Մեծի Իշխանուհւոյն Ալեք»սանդրայ Նիքոլայեվնայի։ Յերեկի աւուր զայսմ ժա»մանակէ յիշումն արարաք մեք ընդ Կայսերուհւոյն։ »Թուէր թէն այնպէս՝ թէ ցանկայ Նա (Կայսերուհին)՝ »զի թոյլ տացիք ինքեան ապօթս առնել առ Ձե»ռամբ մահճօք ընդ Խոստովանահօր Ձերում՝ յաղագս »փութ տալոյ առողջութեան Ձերոյ«։ Յայնմ՝ վայրի

(*) Այն է՝ ընդ Աբբայ Երկրաւն Վ. Պ. Պաժանովայ։

խելամուտ եղև խակոյն Թագաւորն՝ ասասկելոյն ամենայնի։ Զկեաց զապշտպոյն վՀՀետ հայեցուածն 'ի Բժշկին վերայ, և սովորականաւն ձայնիւ հարցուցն ասաւ՝ նբբու Լմէ հարցուցն պարոլ և հատարակ. »Ասէք՝ զի է, Սեռանին ես«։ Եւ 'ի վերջին բառն առաւել ևս բարձրացոյց զձայնն։ Ընդ երկար ափիբերան 'ի պատասխանուոյ եկաց բժիշկն՝ հեղձամղձուկ լեալ 'ի շնչոյն սպառելոյ, և յարտաշուայն զոր զսպէր, և ապա սիրտ 'ի Լմնդոջ ասաց զբանն քաջնեցուցիչ։ Խակ 'ի դէմն և 'ի հոգւոջ Թագաւորին անդորրութիւն էր տիրապէս։ Կալաւ բժիշկն զբազուկ Նորա. (ետես՝ զի) չբաբախէին երակքն, և ոչ մի ինչ զարկ առնոյր մաճառն։ Ի սկզբան անդ հիւանդութեանն ապրումն ինն եղև Նմա զառաջինն զանհրաժեշտ զմօտալուան օրհասէ. և արդ խակ 'ի զուարթ և յանպըղտոր և 'ի հեզիկ հայեցուածն պատկերանայր (խաղաղական) վՀՀակ հոգւոյն, որ զունայնութեանց աշխարհիս զհոգոց և զոտաղոտանաց 'ի բաց ընկենոյր ըզծանրութիւն։ Զերևեցաւ 'ի Նմա և ոչ մի ինչ բուսն ձգտուցն առ 'ի զլեամ ունել օրհասին կանխելոյ։ Ընցին վայրկեանք հինգ կամ վեց 'ի լռութեան։ Ամբարձ Թագաւորն զաչսն իւր 'ի վեր՝ որպէս Լմէ յերկինս, և դարձեալ նմանօրինակ հանդարտութեամբ արար և այլ հարցմունս ինչ բարեմտաբար։ Զինչ յիս գտէք նշան ախտի՝ բժշկական դիտակամբ (*)։

(*) Стетоскопъ.

Փուտու արդեօք ախտեղանոյ (*)։ »Ոչ, պատասխանել
»ետ Բժշկապետն, այլ միայն ընկղեռաւորութեան կամ ուռ-
»ծոյ 'ի լծոքս (**)։ Դռնէք ետ սնրա առէք և ոչի՝ այդ-
»պէս որոշաբար զնոյն զնահատքեր օրհասին յայտնել
»զվիճա«։ — »Թռատուր, բաղում՝ պատճառք էին
»այդմ։ Առաջին և գլխաւոր այն՝ զի զնոյ՝ առ Ձեզ
»գնաստուեն կատարեմ՝ այսու։ Զնա և կնոջ յա-
»ռաջ՝ ասացեալ էիք Դուք ինձ։« »Կամիմ՝ զի ա-
»ռաջիք ինձ զամենայն ինչ ճշմարտութեամբ և 'ի
»ժամու, յորժամ՝ հարկ 'ի վերայ պայցէ։ Ա՛ռ մերոյ
»ունքաքառութեան՝ 'ի վերայ եկն այժմ՝ հարկս այս։
»Ընդ այսմ՝ կատարեմ՝ ես և զայլ ինն արքատան պաշ-
»ատն (վերատեսեալ) առ Պետրոսդ՝ և առ Հայրդ
»գերդաստանն։ Սնան Ձեզ և այլ քանի մի ժամք
»կենայ։ Զե՛ է բարձեալ 'ի Ձենջ յիշողութիւն կա-
»տարեալ։ զիտէք զի չէք յոյս այժմ՝ և ոչ մի։ և յայտ
»է թէ ցանկայք զայսոսիկ ժամս՝ վերջին խոստակցա-
»թեամբ ընդ ծառանդի Գոհուն Ձերոյ՝ յորում 'ի
»կիր արկանել։ Դ վախճանի՝ յայտնեցի Ձեզ զամե-
»նայն ճշմարտութեամբ՝ ոչ ինչ յայտնեցանէ թագու-
»ցանելով, բայ զի՝ ճանաչեմ զՁեզ և սիրեմ«։
Ունկնդիր եղեալ Թադաւորն ուշի ուշով։ Ա՛չ ետ կա-
լեր բժիշկն զարանն փղձուիսն չթափել զարտասուս։

(*) Каверны.
(**) Параличь.

Ասես զայն՝ Թագաւորն. կարկառ զձեռն, և ասայ »Շնորհակալ եմ«։ Ընդեն և այլ քանի մի վայրկեանք 'ի լռութեան։ Ապա ասայ Թագաւորն ցբժիշկն. »Կոչեցէք զորդին իմ՝ զանդրանիկ«։ Ու 'ի կատարել նորա զայս յանձնարարութիւն, յաւել դարձեալ իւրովն սովորական ձայնիւ. »Մի՛ մոռացիք առաքել զայլոց զաւակայ իմոյ, և զորդւոյ իմմէ զԿոստանդն. բայց Կայսերուհւոյն զգուշացարո՛ւք«։ Ա՛յս ինքն յայտնեաց սիրասնունդ որդւոյն զմօտալուտն վախճանէ իւրմէ. և չկամեցեալ երկեցուցանել զԿայսերուհին՝ յաւել. »Ակն՝ ունիմ՝ թէ Դու չիցես ինչ ասացեալ »և չունիս ասել Որդ«։ — Զմանօրինակ ունելով զգուշութիւն և Սնծ Իշխանուհին Սարիա Զիքոլայեվնա՝ որ քան զամենեսին մերձ գտանէր 'ի սենեակ հիւանդին, զոյց ընդ բժշկին առնէր, թէ զիւրդ պարտ իցէ զկրսն մեղմով իմն զգայուցանել Որն։ Բայց արդէն իսկ՝ որ Քրիստոնեայ Ամուսինն էր և Քրիստոնեայ Աբբայակին՝ պատրաստ կայր առ ամենայն. և չեղեն ինչ զարմանք Թագաւորին՝ 'ի տեսանել Զորա մօտ առ իւր զԿայսերուհին որ կայր 'ի տեղւոջ իւրում՝ կալեալ զձեռն զոյգ ընդ որտի առ ինքն կարկառեալ։ (Քահանայն)՝ խոստովանահայր Թագաւորին կայր նոյնպէս 'ի մօտ՝ 'ի ձեռին զսուրբ մարմինն ունելով և զարիւնն Տեառն։ Զկնի ընթերցման աղօթիցն կարգելոյ 'ի պատրաստութիւն Խոստովանութեան, 'ի սենեկէ անտի 'ի դուրս ելին Կայսե-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
97 41-57

ըուհին և Կայսերօրդին, և ապա դարձեալ մտին անդը յետ մատակարարման այսր Խորհրդոյ։ Ա՛յլ ամենայն Նախարարեանն՝ մերձաւորք Օրատոփառ Գերդաստանին՝ 'ի դուռն անկեալք յայլում՝ յառընթեր կայ սենեկի, ապասէին հուսկ յետին շնչոյ Քրիստոսակիր անձին Նորա։ Թագաւորն սեռանոպրելով զինքն՝ ասայ. »Ողջանք իմ՝ այս են առ Ստուած՝ զի առընկալցի զոս 'ի զերկս իւր. »Նա մատեաւ ջերմեռանդն փափաղմամբ և հանդարտութեամբ հոգւոյ առ մեծաբանչ Խորհուրդն. և ապրոյ և ուժգին ձայնիւ՝ որ սովորական էր Նմա, ասայ զպատանութիւն հաւատոյն՝ որ 'ի փրկիչն Քրիստոս, և 'ի սահմանեալն 'ի Նմանէ 'ի Ս. Խորհուրդն Հաղորդութեան, զպատանութիւնն իմա զայնր հաւատոյ՝ զոր միշտն պահեայ հաստատապէս 'ի հոգւոջ իւրում։

Տալով Ստուծոյ զՍտուծոյն մերս այս Կեսար՝ դարձոյց անդրէն զուշ իւր 'ի միում՝ վայրկեան ժամանակի ('ի քիթիթս ինչ ակն) առ դրծս երկրաւոր Թագաւորութեան Իւրոյ. հրամայեաց ապրումն տալ Հեռապրական մենքենայիւ (*)՝ բնակչայն Սառկուայ՝ Վարսաւիայ՝ և Քիեվայ, թէ »Հանի Կոյոքն, (Այս ասէր՝ իբրու թէ ոչ զանձնէ խօսելով), և յաւել« զԿիրաժարիանն ապայ զոգջոյն՝ Հոգեշնչայ Սոկոոյ։ Ապար և ինչ ինչ կարգաւորութիւնս յապագս թագ-

(*) Телеграфъ.

ման Իւրոյ. այս է, պատուիրեաց դնել առ դագաղաւ զպատկերն Աստուածածնի՝ Одигитріи անուանեալ, զոր 'ի Արեւմէն Կաստրինեայ էր ընկալեալ 'ի Ս. Սկըտուլթեան։ Դ. ներքնում՝ յարկի Զմերայեոյ Պալատան՝ նշանակեաց զուահղեանն՝ ուր պարտ էր դնել զտապանն (կամ՝ զարկղն) հանդերձ մահկանացու մարմնովն, և 'ի Պետրոս - Պօղոսեանն (*) անուանեալ 'ի Այր եկեղեցւոջ՝ զտեղի շիրմին։ Կամէր՝ զի թաղուցին Իւր՝ որչափ հնար էր՝ դուշնաքէնութեամբ եղեալ հանդերձանօք շքոյ՝ առանց պայծառայարդար ամբիոնի և առանց մեծաապատ զարդուց երևելեաց եթէ՛ 'ի դահղէն և եթէ՛ յեկեղեցւոջ, զի մի՛ տարտապատման ծախք յԱրքունի դանձուց և 'ի ժողովրդենէն լինելոյն (**)։ Սկըսաւ տալ զբարեաւ մնայէն ասել Իւրուցն Գ. երդաս տանի։ Առ մահճօք ժահուան Նորա ժողովեալ կային ամենայն որ 'ի Ս. Փեթերպուրկ գտանէին՝ Պաշտօնակալք Արքայական Տանն, այլև որդիք Նորա և դքսաերք և թոռունք։ 'Ի վերջնում՝ անդ նուազի կամք եղեն Նմա օրհնել զամենեսին. և ոչ զմի ոք յորոյ չէին անդ՝ եթող 'ի մոռայուլթեան։ Նա բանքն՝ զոր ասիցեն միում՝ միում՝ 'ի Նոյանէ առաց, խոր 'ի սիրաս տպաւորեալք՝ մնան 'ի յաւիտեան։ Ցնա՝ որ զԱհն ունէր

(*) Петро - Павловскій Соборъ.

(**) Զայս ունելով նպատակ մաց Թագաւորն՝ նոցոց յիւրումն Կաակի և զյանկուելթլեանն կարի կարճ ահմանելոյ աւուրցն ոչ յետ նրոյ վախճանի։

ժառանգել, ասաց. »Ծառայեա՛ Ռուսաստանի։« Պատաղօրեայ Մեծի Իշխանին Ալեքսանդրի Ալեքսանդրովիչի՝ որ անագան ուրեմն յետ ամենեցուն առաջի աճաւ՝ այլապունեալ էին դէմք յերկիւղէ. զնա ևս վաղվաղակի Իւրովն Հայրական գգուանօք գորովեայ հանդարտեայ Ամն՝ որ 'ի հանդիսաւոր ժամս յայտնիկ էր ամենայն վասն ամենեցուն։ Ու գոգցես լիցն ընդ ամենայն հասակս յերիւրեայ 'Նա զանձն, մինչև զծաղու ևս գալ և զուարճաբանել ընդ մանկտուոյ Մեծի Իշխանուհւոյն Մարիայ 'Նիքոլայեվնայի՝ փաղաքշականօքն կոչելով զ'Նոսա անուամբք, բայց և համոզելով նոյնպէս՝ ծառայութիւն մատուցանել Ռուսիոյ։ Ամն ինչ 'ի ներքս եմուտ Մեծ Իշխանուհին Ալենէ Փաւլովնա, 'Նա անայլայլակ դիմօք և հանդարտութեամբ ասաց 'Նմա՝ իբրև 'ի ժամու սովորական այցելութեան »շնորհակալ եմ«, և ապա (յուշ բերելով թերևս զհանգուցեալ զամուսին 'Նորա) յաւել »և ինձ աւասիկ հասեալ կայ ժամանակն« ուր զառ 'ի սրտէ զողջոյն իմ՝ Քաղթեայ (Մեծի Իշխանուհւոյ Կատարինեայ Միխայիլովնայի), և Դքսին Գէորգեայ Մեքլենպուրկ-Սթրելենսքեայ, Սմա և 'Նմա՝ երկոցունց«։— Բանք թագաւորին յայսմ վերջին խօսակցութեան ընդ սիրելագունիցն Իւրոց մերձաւորայ, եթէ ոչ ըստ բառիցն՝ գէթ ըստ ոգւոյն կամ զօրութեանն՝ նոյն էին ընդ Քրիստոսի ասացածին 'ի վերջնում երեկոյի. »Ա՛յս է պատուէր իմ՝ զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես

զձեզ սիրեցի«։ Խնամով ինն և առաւելապէս ուշ մնաց Նորա յառեալ կայր առ Ն.ին՝ որ բազմակից ընթացակից Նոին էր լեալ 'ի բովանդակ ասպարէսի կենայն և Թագաւորութեան։ Զ.Նա յանձն արար հասարակայն սիրոյ, և կացոյց լինել խարիսխ միակցորդ հաստատութեան համօրէն Օգոստափառ Տանն։ Իբրև յայլակարծուց, թերևս և յոչ կամաց, 'ի վեր եալ 'ի խորոյ սրտի անկեղծ Վշտակցին յաւագինս այս բողոք հեծութեան. »Ընդէր չկարեմ ես մեռանիլ ընդ Քեզ«, արար Նա առ այս պատասխանի մորմոքանօք՝ 'ի Նա ինքն ակնարկելով 'ի Կայսերուհին. »Կեցջիք Դուք յամենայն ժամ, որպէս այժմս, առ ամրապինդ զուգութիւն ընտանեկան սիրոյ«։—Օրհնել կամեցաւ Թագաւորն, որպէս ասացեալս եմք, և զայնոսիկ 'ի զաւակայն՝ որ չկային անդ։ 'Ի տալ անդ զանուն զմիոյ միոյ՝ վերայոյց զապիկարեալ զձեռնն, օրհնեայ՝ խաչակնքեայ զնոսա՝ առանց տեսանելոյ։ Եւ այս օրհնութիւնք այսպունիւ տուեալք եռանդեամբ հոգւոյ՝ յայտ է թէ ժամանեցին հանգեան 'ի Նոցա վերայ։ Ահեծ Իշխանուհին Օլգա Նիքոլայեվնա, կարեվէր խոցեալն 'ի բօթալից լրոյ մահահրաւէր խօթութեան Ծնողին, խորհէր զնալ հապճեպիւ 'ի տես Նորա, այլ հարկեալ 'ի թախանձանաց Ամուսնոյ իւրոյ Թրոն-Ընկնի՝ յօժարացաւ (թէ և դժուարութեամբ) յառաջ քան զերթն՝ վայրիկ մի հանգիստ տալ անձին։ Եւ այն ինչ զաչսն կափուցեալ՝ 'ի ներհ թերթ և մտանէր, երևու-

լթ այսաւ Ղմա (յանուրջս) ամենեարջանիկն՝ ամենասիրելին իւր Հայր 'ի մահիճս յաւուց և մահուան՝ վերամբարձ զձեռնն ունելով, զայն՝ որով զինքն (զիշխանուհին) էր տեառնապրեալ նախ քան զվախճանին ժամանել։

Ի տարածիլ դամ քան զդամ համբաւոյն դառնութեան ընդ քաղաքն ողջոյն, ելն խռնեցաւ ամբոխ բազմութեան մարդկան շուրջ զԱրքունեօքն. յորոց ոմանք սպրդեցան մտին մինչև 'ի ներքս 'ի վերնասրահ ապարանիցն՝ առ ստուգիւ ինչ իմանալոյ, քանզի և կարէին իսկ ոչ՝ որոյ 'ի լսելիս նոցա հասեալ էր՝ հաւատս ընծայել. և այլք դարձեալ 'ի հրապարակս ուրեք քաղաքին և 'ի ծառազարդ Ճեմելիս 'ի ծունկս անկեալք՝ մաղթանս առ Աստուած վերառաքէին վասն Թագաւորի իւրեանց. այլ արդեօք կենդանի էր Նա, եթէ փոխեալ ՅԱրդարոյն կայանս, զայն ոչ գիտէին։

Կեանք Թագաւորին ձգեցաւ ցքանի ինչ ժամս եւ. այլ դատողութիւն և հաստատութիւն մնայ Նորա 'ի տկարացեալն մարմնի՝ ոչ իւիք թերացան կամ՝ վերջացան։ Կեայր Նա, այս է՝ խորհէր և զգայր, իբրու այնոքիկ՝ որք հանդիպէին արդէն 'ի գոգ Դարձրելոյն։ Նկն սուրհանդակ 'ի բանակէն՝ բերելով զլոյց և թղթեան 'ի Սեծաց Իշխանացն՝ 'ի Նիքոլայէ և 'ի Սիխայիլէ-Նիքոլայեվիչայ։—»Ողջոյն լոյէ Նոցա, ետարց Կայսրն. այլքն ամենայն Ինձ ոչ անկանին այժմ. Նա համայնիւաւ Աստուած մնանեմ«։—Այլ Յայսր ամենայնի վերայ՝ չդադարեաց Նա 'ի կատարելոյ յերկրի զԻրկչին

մերոյ զՀուսկ յեռին զմշանջենակարգ պատուիրան, զԱՄԷՆԵՍՆ. զի գիտայ սիրել, սիրել և զթշնամիս Իւր՝ ներելով նոցա՝ի սրտէ, թէ և ամենայն ամենայն արարքն՝ իբրու սաստ ընդ սիրտ Նորա անցին. գիտայ սիրել և շնորհակալ լինել որոյ սիրեցինն զՆա՝ և ունին սիրել՝ պատուելով զյիշատակ Նորա յարաժամ։

Յետ օրհնելոյ զՄեռանն Իւր, զորդիս, զքատերս և զթոռունս, կոչեալ առ ինքն զորս էին՝ի Գալատան՝ զՄՀակեայ Օրապետն՝ զՅունն Օռլով, և զՆախարարս Դրան, և զՆախարարն Հնուրական, շնորհահատոյց եղև նոցա վասն ծառայութեանցն. յանձն արար և Յառանգի Իւրում՝ շնորհակալութիւն առնել Յիւրմէ կողմանէ՝ Ազնատոհ Գնդին, բանակի զորայն, Տորմզի նաւուց, և առանձինն՝ որոյ քաջարիստէս զանձինս եղին՝ի պաշտպանութիւն Սևասթոպոլեայ (*)։ Ոչ՝ի մեռայօնս եղեն Նմա և առընթերակայ սպասաւորքն, որպէս և ոչ սլեորեալքն ընդ զինուք Ազգուանատոհ զօրականք. զամենեսեան զնոսա օրհնեայ՝ բանս գորավանս միւմ՝ միւմ՝՝ի նոցանէ ասելով։ Եւ ապա ժպտելով ասաց եհարց յՆԺիշկն. »Փութմ՝ տայք Ինձ արձակումն. Փութմ՝ վախճան եղեալ ամենայնի«։ »Դեռ ոչ այդպէս փութմ՝, պա-

(*) Կայսրն՝ որ այժմ թագաւորէ, կատարեաց զայս կամս ծնողին յերկրորդումն աւուր յառաջքան զընթերցումն Յայտարար Հրովարտակին՝ որ յաղագս ամբառնալոյ Նորին Մեծութեան՝՝ի Հայրենի Գահն և յառաջ քան զերդնուլն՝՝ի հաւատարմութիւն։

տասխանեի ետ Ինձ ինչին«։ — Զգրկեմ արդեօք յուշոյ մտայս»։ — »Ակն ունիմ, Զերդ Սնծուվթիւն, լմէ ամենայն ինչ մեղմով եղեցի և հանդարտօրէն»։ Ի կատկածի կայր միշտ Թագաւորն, մի գուցէ զԻր ըգնելոքին գիտակցութիւնն կորուսանիցէ։

Այն ինչ զվերջինն տայր համբոյր՝ Յաջորդի Գա»հուն Իւրոյ, ասայ. »Կամ էր Ինձ՝ անձամբ ամենայն »տաժանականայն զրաւ արարեալ՝ թողուլ Քեզ Թա»գաւորութիւն խաղաղ՝ բարեկարգ և բարեվիճակ. բայց »այլազգ Վերին Տեսչութեանն եղև դառնաստան։ Արդ »երթամ՝ ես բարիս մաղթել վասն Ռուսաստանի և »վասն Զերդ։ Յաշխարհի ատ, յետ Ռուսոպանի՝ ա»ռաւել քան զամենայն ինչ զՁեզ սիրեցի«։

Յընթեռնուլ Խոստովանահօրն՝ ըստ ցանկութեան Նորա՝ զաղօթքն կարդեալ յոպոփ ուսոպոնն հոգ-ոյ, այնպիսեաւ լիցն կամայորդոր ուշադրութեամբ ըսէր Նա զայն, որպիսեաւ լուեալ էր և զաղօթքն սահմանեալ էանն պոպրոսոպոլ-էանն ասա խոսոպանոլ-ինն. կընքեաց զինքն քանի մի անգամ՝ նշանաւ Ս. Խաչի, և յաւարտ աղօթիցն զհրաժարականն տալով զողջոյն՝ սեղմեաց ուժգին ի շրթունսն զխաչն լանջական՝ զդրուագեալն պատկերաւ Խաչելոյն՝ յորոյ դիմէր Նա ի դիրկս։ Ու զի ոչ ևս էր ատակ ասել ինչ ի բերանոյ, աղօտ ակնարկութեամբ և ելթ եցոյց Խոստովանահօրն զԿայսերուհին և զԹառանգն, որպէս թէ խնդրելով միսիթարել զՆոսա և աղօթս առնել վասն Նոցա։ Կալեալ

ունէր Նա զձեռս Նոցա, էր վի և սեղմէր 'ի բուն-
այլ իբրև վայրկեանք քան 'ի վերայ անցին յետ հա-
ստատակ աւուր, նուազ եղև զդալն՝ սեղմումն այն մեղ-
միկ, և հուսկ՝ դադարեաց 'ի սպառ ընդ դադարել
սրտին բաբախման։

Կացին՝ յորոյ վերայ պէտք է մեզ առնուլ
զքս, այսօրինակ ընկալաւ վախճան։ Հայրն Պատմող՝
Խոստովանահայրն Նորա, այլ պատուական Քարէշա (որ-
պէս ասաց Թագաւորն 'ի միումն 'ի վայրկենից Իւրոյ
յառաջ քան զմահն), այն՝ որոյ առաջի բացան ա-
մենայն գաղտնիք հոգւոյ Նորա, ասէր մեզ արտասուօք.
»Ոչ ոտ պարտուց կոչման իսոյ՝ յոգունց 'ի մարդկանէ
»'ի հանքաւելոյն բարեպաշտութեամբ՝ տուեալ է
»նմ զթոշակն յետին, և ապրիս 'ի վերայ Նոցա կար-
»դացեալ, այլ յաղթանակ Հաւատոյ 'ի վերայ մա-
»հու՝ այսչափ սրտառուչ և մեծահանդէս՝ չեղև ինձ
»երբէք տեսանել«։ Ու այս՝ և այլ ոք յականատե-
սաց վախճանի Թագաւորին՝ յաւելու. »Թէ էր հնար
»ժամուք ինչ յառաջ քան զայս՝ մուծանել յառանձ-
»նարան անդր Նորա զայր ոք աստուածանգէտ՝ և Ա-
»տուածականին անծանօթ Տեսչութեան, նոյն նա
»Բրիտոնեայ անուն ելանէր այր։

Ա՛յլ մեք ոչ զկայ առնումք յայսոսիկ և ելթ դէպս
և 'ի հանգամանս՝ յորս այնպէս յայտյանդիմանութեամբ
ցուցան մաքրութիւն և ուղղութիւն՝ սրտի, խորհրդոյ
և ամ՝ յօժարութեանց ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ,

'ի յետին աւուրս և 'ի ժամս կենաց Նորա։ Նաւել և սխալմարութիւն է մեզ դնել և ցուցանել ընթերցողաց և ամենայն Հայրենակցաց մերոց, զի այս զգայմունք, այս անքծութիւն որոնի, յանդ մի և նոյն էին 'ի Նմա։ Այլայոյց այսմ մարթի լինել որ զիւրապոնդ յիշատակեցաւ Կտակն արտրեալ 'ի Նմանէ։

Գրեալ է այն 'ի սկզբանէ մինչ 'ի ծայր Խրատ-կան ձեռամբ Թադաւորին վաղապոյն և 'ի 1844 տի, 'ի 4 Մայիսի, յաւուր (ուրբաթ) Համբարձման, որպէս 'ի վերջ կոյս գրուածոյն նշանակեալ է 'ի Նմանէ 'ի ներքոյ ստորագրութեանն։ Այն իսկ և նշանակեալ կայ անդամնօր, զի թէ և նախապաղավար կամ՝ ուրուագիծ և եթէ է այն՝ Կտակագրի, բայց խնդրէ Ինքն 'ի կատար ածել զամենայնն ըստ գրելոյն 'ի թղթի անդ՝ եթէ չժամանիցէ անդրէն զնոյն պարզագրել։ Յընթեռնուլդ զԱնդարձական զայս Գիր՝ չմարթիս զի-տել, ընդ որ առաւել 'ի պատկերագրելոյն, կամ հաւատագոյն և՝ 'ի շնչելոյն յիւրաքանչիւր բառս 'ի ներքին շարժմանց ոգւոյ, արժան ի՞նչ զարմանալ, և ոչ միայն զարմանալ, այլ և (որպէս ասացեալ եմք) զուարճանալ, ընդ դորովակամն հոգատարութիւն Հօրն գերդաստանի՝ որ միջամուխ 'ի մի ըստ միոջէն լինի կարգայն կարևորայ զամուսնոյ և զզաւակաց, եթէ ընդ ե-ռանդնաբորբոքն սէր առ Հայրենիս և առ Հայրենեացն վասն, կամ թէ (զվերջինն ասացուք) ընդ Քրիստոնէական հեզութիւն և հոգատարութիւն։

Նշանակեսցուք յառաջ քան զամենայն (յաւէտ առ զուշացուցանելոյ կանխաւ, եթէ հնարաւոր լիցէ այս) զտարաղէպ համբաւան նմանապոյնս այնոցիկ՝ որք հրատարակին օրագրովք ոմանք զկեղակարծ և զանպոյ ամենայնիւ զքաղաքական կտակէ Մեծին Պետրոսի, թէ յանդարձապրի ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ, յայնմ՝ որ զրեալ է ամօք ինչ յառաջ քան զայս Յունքնակալէն աշխարհատարած Թագաւորութեան, 'ի կատարեալ զօրեղագոյն ժամանակի, 'ի միջի նոյն խակ բարեպատեհ հանգամանաց՝ չինք և ոչ մի յօդուած և ոչ մի բառ զէթ առ 'ի յոյսս պատուասիրութեան (եթէ ունէր 'Նա զայնս) որ առ քաղաքականութիւնն վերաբերիցի՝ ոչ միայն արտաքնոյ, այլ և ներքնոյ։ Գիտէր 'Նա՝ թէ ամենայն այպունակ յուցմունք արարեալք 'Ի ԹԱԳԱՒՈՐԻՆ և 'Ի Հօրէ՝ կարող էին փոքր 'ի շատէ դժուարացուցանել և 'ի դերև առնել զգործս Յաջորդին Գահու Խրոյ յորպիսում և իցէ յանակալ յեղափոխութեան իրային հանգամանաց։ Գիտէր 'Նա նոյնպէս և զկարգս և զսիրտ այսր Յաջորդի, և անակնկալ էր՝ թէ ամենայն ինչ ունի կատարիլ 'Ի Նմանէ 'Ի բարիս Ռուսաստանի, որպէս կատարէրն Յիսրմէ՝ թէ Ինքն էր լեալ 'Ի սեղեռոջ և 'Ի վիճակի Նորա։

Պարթէ ասել, թէ Կտակս այս, 'Ի բայ առեալ զքանի մի կարպաղրութիւնս՝ որ յաղագս սեպհական անձնական գոյից Կայսերս, Նիկոլին լմն խօսակցութիւն

է հոգւոյ Նորա ընդ Ինքեան, և պեղուցն խնամսոյ և պատմանոյ իբրև արդարև Մարդոյ և Քրիստոնէից Զկամեցաւ Նա զիւր զայս գրուած անուանել Վէրջին Կամ, իբրու չթոյլատրելով Ընձին անդր քան զշիրիմ հրամայել, և ետ նմին կոչուցն առաւել հանեսատպոյն և խոնարհապոյն՝ Վէրջին Յանկուածոյ Իւր։

Ըստ Քրիստոնէական սովորութեան՝ սուրբ առնելով Նա զիսուած Ընդարձակրիս անուամբն Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, մնաց առնէ 'ի կարգ բանիցն ըստ այսմ։

»Յամին 1831, 'ի Յունիսի 21, 'ի ժամանակի՝ յորժամ մաղձայոյզ ախտն (*) 'ի վեր երևեցաւ, գրեցի »Աս Ճեպ 'ի Ճեպոյ 'ի հարևանցի զնմ՝ զվերջին ցանկութիւնս։ Ողորմածին Աստուծոյ հաճոյ եղև ոչ միայն պահպանել յայնժամ զկեանս Գերդաստանի Մերոյ, այլ և առաւելուլ առ Մեզ զողորմութեան Իւրոյ զընդարձակ։ որով և նոյն իսկ Գերդաստան Մեր »յայնմհետէ և այսր ընկալաւ զաճուցն երևելի։ Ա,յս »բարեյաջող դէպք հարկ առնեն Ինձ փոխել 'ի մտանէ զառաջին դիտաւորութիւնս Իմ։ որոյ վասն կարևոր դատի սահմանադրել զհետևեալսդ իբր բայայտութիւն Իմոյ վերջին ցանկութեանց։

Առաջին յօդուածն Ընդարձակրի նուիրեալ է բովանդակապէս Այնմ՝ որ առ կենդանութեամբ Այ-

(*) Холера.

սերն 'ի Տէր հանդուցելոյ՝ յանդ զառաջինն ունէր զտե-
ղի 'ի սրտի Նորա՝ զինի հոգողութեանն զԱխալեցա-
կան պարտուց վերաբերելոյ առ Ռուսիա։ Յետ նշա-
նակելոյ զազգի ազգի զանշարժ ինչս կամ՝ զկալուածս,
այս է՝ զտպարանս, զամարաստունս, զստակերտս,
զշէնս, զապարակս, յորս որոշին անձնական ստայուածք
Թագուհւոյ և Կայսերուհւոյ Աղեքսանդրայ Թէօտորով-
նայի, յաւելու. »Յանկամ միայն՝ զի Կնոջ Իմում
»Թողցի շահել զլուր հանգիստ 'ի Զմերայնի Պալա-
»տան Յելակին կղզւոջ, և 'ի Նոր Պալատան 'ի Յարտ-
»քոյէ Սէլ։

»Բայց յայմանէ, թէ և ըստ իրաւանց ժառան-
»գութեան՝ Նիքոլայեվսքի Պալատն (Անիչքով) պարտի
»պատկանիլ Արէց Որդւոյ Իմում, սակայն Կնոջ Ի-
»մում թողում օգտիլ այնու յամենայն 'ի կեանս Իւր,
»եթէ Նմա այս հաճոյ լինիցի«։

»Պատուիրեմ (կտակաւ) Զաւակաց և թոռանց
»Իմոց սիրել և պատուել զԾնող (զՊայր) Իւրեանց,
»հոգ տանել զանդորրութենէ Նորա, փութալ հաճել
»յամենայնի զկամն Նորա, և ջանալ սփոփել զԾե-
»րութիւն Նորա քաղցրահամբոյր խնամողութեամբ։
»Զի յինչ 'ի կարեւորաց ձեռնամուխ լինել երբէք
»յամենայն 'ի կեանս Իւրեանց՝ առանց յառաջնմէ
»խորհուրդ 'ի Նմանէ հարցանելոյ և առանց զՊայ-
»րական ընդունելոյ զբարհնութիւն։

»Արսերապունիցն Իմոց Որդւոյ գլխաւորն ընդ Ի-

»խանութեամբ կամայ Նորա կալ մինչ յժամանումն »յարքունս հասակի«։

Ի յօդուածսն 2, 3, 4 և 6, յիշատակելով՝ թէ պարգևեալն Ինքեան ՝ի Կայսերէն Աղեքսանդրէ Առաջնոյ՝ Պալատն Նիքոլայեվսքի (Անիչքով) հանդերձ ամենայն տամ՝ քն և տեղեաք պնելով՝ ՝ի պէտս այնորիկ ընդ ժամանակս ժամանակս, նմանապէս և թողեալքն ՝ի Կայսերուհւոյն՝ ՝ի Մարիայ Թէօտորովնայէ կալուածքն Կաթշինեան, ՝ի վերայ հիմանցն և պայմանայ ՝ի Նորուն Կտակի եղելոյ՝ պարտին պատկանիլ Ժառանգի Գահուն (զոր Ինքն՝ ըստ ներշնչելոյ հայրական նախազգացութեան՝ զոգոյս լմի համարելով զանձն ելեալ յաշխարհէ աստի, ամենայն ուրեք կայոր անուանէ), նշանակէ Նմա կանխաւ և զՍեպհական Օվնարանն Իւր ՝ի Յարաքոյէ Սէլօ, և Մեծի Իշխանին Կոստանդնի Նիքոլայեվիչի՝ զամենայն զծովային զաղափարս (*), զհեռադիտական գործիս և զլոգս, ևս և զՍենեակն շքաղրամոյ (**) և զՍեպհական զԻւր մատենադարանն՝ որ ՝ի Պալատանն Անիչքով։

Յօդուածքն 5, 7 և 8, բովանդակեն յիւրեանս զկարգաւորութիւնն բաժանման դրամագլխոյ թողելոյ ՝ի Կայսերուհւոյն ՝ի Մարիայ Թէօտորովնայէ ՝ի մէջ Մեծայ Իշխանացն՝ Կոստանդնի, Նիքոլայի և Միխայիլի Նիքոլայեվիչաց, հանդերձ բացայայտութեամբ՝ թէ

(*) Морская Модель.
(**) Медальный Кабинетъ.

մաան մի այնպիսի 'ի զոլծ եղեալ է 'ի զլնա Սթ ըն-
ելնոյքն կալուածոյն՝ վասն Սնծն Իշխանին Կոստանդնի
Նիքոլայեվիչն, և Հնամենաքն զատուակերտին՝ վասն
Սնծն Իշխանին Նիքոլայ Նիքոլայեվիչն, և Փոքր
Հնամենաքն կալուածոյն՝ վասն Սնծն Իշխանին Սի-
խայիլ Նիքոլայեվիչն։

Թագաւորն Յ7 երրորդ յօդուածն խօսելով զբաս-
տակերտէն պատկանելոյ Սնծն Իշխանին Նիքոլայ Նի-
քոլայեվիչն, որ կայ և ունի կալ յիշխանութեան Թա-
գուհւոյ և Կայսերուհւոյ Ալեքսանդրայ Թէոդորովնայի
յամենայն ժամանակս կենաց Նորա, յաւելու. »Հա-
»ճոյից Կնոջ իմոյ կախեալ մնայ՝ թողուլ զամարտա-
»տունն յօդուտ Որդւոյ իմոյ՝ յոլժամ և կամիցի։ Իմ
»յանկութիւն է՝ զի լինիցի այս յոլժամ 'Նա զամուս-
»նականն ընկալցի զպտակ«։

Կայսրն և ոչ զմի ինչ արկեալ 'ի մուտայօնս, թողու
Որդւոյ իւրոյ՝ Սնծայ Իշխանայն՝ բաժանել զիւր
սեպհական ձիրանն հաւասար բաժնիւ և վիճակաւ (յօդ.
9), և Սնծն Իշխանին Սիխայիլ Փաւլովիչն (թողու)
ընտրել 'ի մեծ ասպատանէն զայս յերիսլաւոյ՝ զոր
յանկանայցէ առնուլ Ինքեան (յօդ. 10)։ Բայց և 'ի
միջի այսոցիկ դերդաստանական՝ մարթ է ասել և
տնտեսական՝ կարգաւորութեանց, հանդիպիմք մեք
մարդասիրադոյն և խնամոտ ինն ուշադրութեան ԹԱ-
ԳԱՒՈՐԻՆ առ տնանկս և չքաւորս նպաստաւորեալս
'ի նմանէ, առ սենեկապետս և առ այլ ներքին ապա-

սուրբ, այլ և առ զառամեալ զօրականս կայսերն երբեմն առ Նմա 'ի ծառայութեան։ Կա Ինքն յետ յայտնելոյ 'ի 11 երորդ յօդուածի, թէ բովանդակ պլուխն անձնական դրամոց Իւրոց պահպանեալ 'ի տեսչութեան Սեպհական Հաշուէտուն Իւրոյն Արծուութեան ընդ զանազան անուամբք, պարտի բաժանիլ հաւասարապէս 'ի միջի երեցունց Արծաց Իշխանութեանց՝ Արաբիայ, Օքիայ և Աղեքսանդրայ Նիքոլայեվիչայիս, յարէ խսկոյն. »Բայց որովհետև 'ի տոկոսեաց այսր »դրամագլխոյ հաստատեալ լինէին բազում թագուկք »յարքունուստ կարգեալք, յայն սակս խնդրեմ՝ զի այն»պիսի թագուկք տայցեն 'ի Թագաւորական Գանձարան»նէն կամ՝ Ամենէ ընչեցն արքունականաց, որպէս »զիարդ կամք Կայսերն լինիցի (*)։ Ի հետևեալ 12 »յօդուածի. »Յանկամ՝ զի թագուկք սենեկապանաց »Իմոց համայնից՝ որք ծառայեցինն Ինձ հաւատար»մաբար և ջերմեռանդօրէն, դարձուցին 'ի հասցթ»մշանջենաւոր (**)։ Ի թիւ այսոցիկ ապասաւորաց »համարիմ զԵյպ-Ռէյթ-քնեխթոն և զկուռավարն »իմ զՅակոբ«. և 'ի 15 յօդ. »Խնդրեմ՝ 'ի Կայսե-

---

(*) Յոլագս այսց դրամագլխոց՝ 'ի նմին խսկ 'ի 11 երորդ յօդուածի սահմանադրեալ Թագաւորն, թէ այնոքիկ պարտին մնալ միշտ 'ի Ռուսաստան. և թէ՝ Արծ Իշխանութիքն մարթին օգտիլ միայն տոկոսեօք նոցին. խսկ գլխովքն յոյնժամ և եթէ՝ յորժամ կամիցին ստանալ զանշարժ գոյս կամ զկալուածս 'ի Ռուսիա։

(**) Пенсіонъ.

»լեն՝ զԹոռաբաբ լնում՝ ունել 'ի վերայ զառամ-
»ության զօրականաց՝ որք առ Իսն կայեն յայլեայլ տե-
»զս ընդ կոչմամբ Օ.Լնարտանական պարշանեն։ Յան-
»կամ՝ զի կայցեն նոքա յամենայն ժամանակս կենաց
»իւրեանց ըստ առաջնոյ կարգի մինչ ցայն վայր՝ յո-
»րում կամք լիցի Նմա (Այսրեր) բարձրել զապ-
»ստուտ նոցա։

Թագաւորն քրիստոնեայն 'ի Յառանդէն Իսրմ (Ի յոդ. 13) դարձուցանել զաւշ Իւր առ հաւատա-
լին և բազմաժամանակեայ ծառայութիւնն Ներքին
Խորհրդականին Պլոքայ՝ պարգևելով նմա հատցեր
ազնջենաւոր հաւատարմութիւն՝ զոր նայն
ասմնայր։

Յոդուածն 14 երորդ առանձին լմն յիշատակի
արժանի է սրտառուչ և կենդանի նկարագրութիւն
բազմաժամանակեայ բարեկամութեան։ Թագաւորն
խօսի՝ սրտին բարբառով՝ զընկերակցայն առաջին տիոց
Իւրոց, և 'ի խօսս Նորա չնշմարի ամենևին՝ և զոպցես
լմն աներևութանայ՝ խտիրն ընդ մէջ Թագաւորի և
հպատակաց. »Ո տղայական տիոցս, ասէ, անձինք ել-
»կու բարեկամք Ինձ եղեն և ընկերացան. բարեկա-
»մութիւն նոցա ընդ իս՝ չփոփոխեցաւ երբէք։ Ա.Ա-
»ջակից-Օ.օրապետն Ատերպերկ սիրեցի Նա որպէս
»զեղբայր հարազատ, և ակն ունիմ ցվախճան կենաց
»ունել զնա 'ի նմին յանայլայլակ և 'ի ճշմարիտ
»մտերմութեան։ Զոր նորա Յուլիանէ Ֆէտորովիչա

»Պարանովա՝ անոյշ դատեսիարակեաց զերեսին դատելս
»Իմ՝ լիբլև ազգական բարի՝ փոյթ և ժիր ՝ի վաս-
»տակս։ Ա՛ռ ՝ի յիշատակ Իմ՝ երկոյուսնոյ նոյա խընդ-
»ութեամ՝ տալ հատոյթ մշտնջենաւոր՝ բաց յորոյ տա-
»նանն՝ հնգետասան հազար ղուռշի ոսկեթ լաւ։
»՝Ի վերջնում նուազի շնորհ ունիմ նոյա վասն եղ-
»բայրական սիրոյ«։

՝Ի յաջորդ յօդուածն (16 և 17) Թագաւորն յայտնելով զգոհութիւն և զերախտագիտութիւն առ որս վաստակեալ են ՝ի կրթութիւն զաւակաց Իւրոց՝ Աստծոյ Իշխանաց և Աստծոյ Իշխանուհեաց, և պատուիրելով սիրել զնոսա և ՝ի պատուի ունել, յանձն առնէ Դառանցի Գահուն՝ յապահովի զնոցանն կայուցանել զբարօրութիւն։ Հնորհակալ լինի և Խոստովանահօր Իւրում՝ յայնմ ժամանակի եղելոյ՝ Հօր Աուզոլսքեայ, Պալատական Բժշկապետացն՝ Արենտթայ, Արբուսայ, Անտթայ և Բէյնկոլթայ, ՝ի սակս վաստակոց նոցա և հոգողութեանց։ »Հորհակիչ եմ ոգւոյ շոյ« բուն խակ ասացած է Հորին Կայսերական Աստուծեան։ Յայնոյիկ՝ որոց բարեբաստատոյն եղև դէպ ծառայել Նմա, և շատ կամ սակաւ մօտակայ լինել կամ ընտանենալ ըստ անձնիւր պաշտաման և ըստ Հորուն ՝ի նոսա վստահութեան, յանուանէ յիշատակելով զամենս յառանձին հատուածս (՝ի յօդ. 18, 21 և 22) զրէ վասն Իշխանին Պետրոսի Սիւխայելովիչի Վոլքոնսքեայ, թէ »Հայելով ՝ի զառա-

»մեալ հատակն՝ անփոփոխ ջերմեռանդութեամբ և
»յօժարամիտ կամօք հոգ տանէր որպէս զինէն, նոյն
»և զերդաստանէ իմմէ և զիմոյ անձնական գործոյ«։
Վասն Իշխանին Իլլարիոնի Վասիլեվիչ - Վասիլչիքո-
վայ ասէ. »Նա զծառայութիւնն սկսայ ընդ տեսչու-
»թիւնեամբ Նորա. ՅՐ նա ինձ յարաժամ՝ սերտ մտե-
»ցիմ՝, հրահանգիչ, և ապա առաջին օգնական 'ի գործս
»ծառայութեան«։ Հանրական Օրդինանսներին
և Իշխանին՝ Վարշաւայի անուանելոյ, (շնորհ ունիմ՝),
ասէ, »որպէս վասն մտերմական սիրոյն և բարեկա-
»մութեանն, նոյնպէս և վասն դիւցազնական քաջա-
»լրծութեանցն՝ որովք զՆերոյս զինու բարձրայոյց
»զիտաւ, և նեղուն արար զբաւական«։ Յայնցանէ՝
որք առ Նմա գտանէին առանց 'ի բաց մեկնելոյ,
կամ՝ վարեալ լինէին 'ի Նմանէ 'ի գործս կառա-
վարութեան, և որոյ Նա այնպես զիմաստութեամբ
շնորհ ունի վասն աշխատանաց և ճշդիւ հոգատարութեան
յանձնարարութեանց Իւրոց և վասն հաւատարիմ ծառայութեան՝
այնչափ օգտաբերէր եղէլոյ Թագաւորութեան (՝ի յօդ. 19 և
20), բազումք վաղահուպ մահուամբ քան զՆոյն
Ինքն զՄիսպետն Իւրեանց յառաջեցին յերկն յաշ-
խարհէս. և որք մնացինն՝ չեն բազմաթիւ, բայց ու-
նին անջինջ 'ի սիրտս Իւրեանց պահել զայս վերջին
գոհութիւն Նորա, իբրև առ 'ի վերուստ յաշխարհէ
անտի 'ի լուսագունէ առաքեալ։ Երջանիկք եղիցին
նոքա՝ եթէ կարասցեն արդարացուցանել զայն՝ ծա-

ռայելով ջերմեռանդօրէն Ինքնակալին Տնծի Ազգի Ազգին Ազնմռանալոյն (*)։

Թագաւորն յայտնէ նոյնպէս զգոհութիւն և զերախտագիտութիւն՝ Իւրայոյն ամենեցուն՝ Ժանդակ-Օրսպետաց, Օրսպետաց և Թեւակից Պուշտոնէից (՚ի յօդ. 23), պատուիրելով՝ նոյնպիսեաւ ծառայել ոնրով և հաւատարմութեամբ՝ Ազգի Իւրում. և զբանին դէմն, ՚ի մասնաւոր անձանց՝ որք առ Նմա կային ՚ի ծառայութեան, փոխելով առ սիրելի զօրականն Իւր առ հատարակ, ասէ. »Շնորհ ունիմ փառաւոր և հա»ւատարիմ Ազնձնապահ Գնդին՝ ազատարարի Ռուսիոյ »յամին 1825. Շնորհ ունիմ նոյնպէս սկայազօր Բա»նակին և Հաւատարմին։ Աղաչեմ զԱստուած՝ պա»հել ՚ի նոսա յամենայն ժամ զնոյն քաջութիւն սրբ»ոի և զնոյն ոգի. զի ցորչափ անհուազ ՚ի նոսա կայ»էէ այս եռանդն փութոյ, ունի և Թագաւորութիւնն »կալ յանկասանի՝ ապահովայեալ յամենայն արկա-

(*) Քաղուածով գնեմք ստանիր զբուն բանս 19 և 20 յօդուածոյ, զորոց վերագոյնք յիշատակ եղև։

19. Շնորհ ունիմ Կ. Պենկենտորֆոյ և Կ. Օռլովայ վասն անփոխոխ մատրմութեան նոցա և ամենեկին առ Իսն կալոյ, և վասն ջանիցն և ջերմեռանդութեան՝ որովք ՚ի կատար ածին զամենայն որ ինչ յանձնեցաւ նոցա.

20. Շնորհ ունիմ Ի. Զէրնըշևվայ, Ի. Մենշիքովայ, Կ. Կուտուզովայ, Կ. Քանքրինայ, Կ. Պլատովայ, Կ. Քիսելևվայ, վասն նոցուն հաւատարիմ ծառայութեանց՝ այսչափ շահաբեր եղելոյ Տէրութեան։

»ծիւոյ ներքնոյ և արտաքնոյ. իսկ թշնամեայ նորուն
»վա՛յ ՝ի վերայ վայոյ։ Սկրեցի Նա զնոսա որպէս զիմ
»զաւակս. ջան եղի՝ որպէս զնարդ կարողն էի՝ բար-
»ւոքել զլեռնակ նոցա. եթէ չյաջողեցայ յամենայնի,
»այն չէ՛ ՝ի թերութենէ կամայս յօժարութեան, այլ
»յայնմանէ՝ զի կամ ո՛չ զիտայի զլաւագոյնն խորհել,
»կամ զի առ առաւելն չեղէ ձեռնհաս (՝ի յօդ. 25)։
Օ՜կնի այսորիկ դառնայ Նա անդրէն առ Ադամ
Օրատաւոր Գերդաստանին, և առ որս մերձաւորք
Նմա ճանաչէին ըստ Ամուսնականն կցորդութեան,
շնորհս մատուցանելով զանս մտերմութեան ազգայ-
նոց և խնամեայ՝ Իւրոյն և Կայսերուհւոյն (՝ի յօդ.
28, 29 և 30)։ Օ՜Բեռէ Իւրմէ զերկնցադունէ՝ այն է՝
զԱՏԾէ Իշխանուհւոյն զԱրքայ Փաւլոսեայէ ասէ.
»Ի մանկութեան ոմոցս առանձին խմն ձգտումն զդայի
»առ Նա յաղագս զթոյ քաղցրութեանն՝ զոր ցուցա-
»նէր ինձ յամենայն ժամ։ ՝Ի յետին ժամանակս ա-
»ռաւել ևս ծանրագին եղև ինձ մտերմութիւն Նո-
»ցա, և յաշխարհի ասա չեղև ինձ յայլ ոք ՝ի մարդ-
»կանէ այնչափ ունել վստահութիւն՝ որչափ ՝ի Նս։
»Պատուէի զնա որպէս զԱյր, և ՝ի վեր հանէի Նմա
»զամենայն ճշմարտութիւնս ՝ի սրտիս ՝ի խորոց։ Ա-
»տէն իսկ ՝ի վերջնում նուագի երկրորդեմ Նմա զիմ
»զաւ ՝ի սրտէ շնորհակալիս վասն մխիթարութիւնս-
»քեր վայրկենիցն անցելոց ՝ի խօսակցութեան Նորա»։
Եւ վասն Սեծի Իշխանին Սիխայելի Փաւլոսիչի (որ

Կոսկակատարը 'ի Նմանէ էր կարդալ Յ Ընդարձակ-
ղլխա յայսմիկ ընդ Կայսերն որ այժմն թագաւորէ, և
ընդ Ժանդակ-Օրապետայն՝ ընդ Իշխանին Վրոլ-
քոնսքեայ և ընդ Կոմսին Ատլերպերկայ) ասէ. »Պա-
»տուէր տամ՝ թագաւորին և համօրէն Պերդատանի
»Իմուամ՝ սիրել և յարգել զեղբայրն Իմ՝ և զՀարա-
»զատ մտերիմ զԱրևայիլ Փաւլովիչ։ Նա եղիցի Ն-
»յա յարատեան կենդանի, ցուցանել՝ թէ ուրպէս պարտ
»էր ծառայել Նոցա։ 'Ի մասին յայսմիկ շնորհ ու-
»նիմ 'ի որոյ Արևայիլի Փաւլովիչի վասն յարատևակ
»սիրոյ Նորա առ Իս և ծառայութեանցն և նպաստ-
»ակ. լինդրեմ 'ի Նմանէ՝ ոչ զլանալ զբարի բարի
»խորհուրդս Իւր՝ զաւակայն Իմոյ՝ զորս յանձն առ-
»նեմ բարիոք տնօրէնութեան Նորա։

Պատուիրէ Նա նոյնպէս 'ի Կտակին, կամ՝ ըստ
Նորա ասելոյն՝ երդմնեցուցանէ զՕաւակն և զԹոռ-
ունսն, սիրել և պատուել զթագաւոր Իւրեանոյ յա-
մենայն սրտէ, ծառայել Նմա հաւատարմաբար՝ ան-
դուլ ջանիւք՝ առանց տրանջանաց՝ ցվերջին կաթիլ
արեան՝ ցյետին շունչ կենաց, և յուշի կապել՝ թէ
պարտին օրինակաւ անձանց ցուցանել, զինարդ արժան
էր հաւատարիմ հպատակաց՝ յորոց Ինքեանք առաջ-
ինք են՝ ծառայել ('ի յոդ. 26)։

»Նա հաւատայեալ եմ, 'ի վերայ բերէ թագաւ-
»որն ('ի յոդ. 27), թէ Որդին Իմ Ալեքսանդր Նի-
»քոլայեվիչ՝ Կայսր, լինիցի միշտ Որդի պատուամա-

»տոյց և քաղցրահամբոյր, որպիսի էին ընդ Սուղ
»հանապատ։ Պարտքս այս սրբազանագոյն ևս եղեալ
»'ի միայնակն ճոռ Սօր Գրիգոր, որում պիտոյ է յայն-
»ժամ յԻւրուցն միայնութեան դտանել զլինելութիւ-
»թիւն 'ի սէր անդր և 'ի շնորհասարար մեծարանաց
»զաւակաց Իւրոց և թոռանց։ Հարկ է Ուղղոյ Իմում՝
»նբրև Հօր Գրիգորեանի, 'ի վարին ընդ եղբարս
»Իւրոյ՝ պնեղոգական քաղցրութիւնն առ նոսա առ-
»ատոյն անլեռութեան՝ խառնել ընդ կարևորագունին
»քան զամենայն ընդ հաստատութեան մտաց, չասել
»երբեք տեղի առանին կռուոց, և ոչ որպիսում՝ և
»էյէ անոյիս՝ որ կարին վեստակար լինել ծառայու-
»թեան, որում՝ և Տէրութեան խակ, և 'ի նոյնն հան-
»գոյն դէպս՝ (յորոյ պահեսցէ զմեզ Աստուած) պինդ
»յուշն ունել, թէ թագաւորն է Ինքն, խակ այլքն ա-
»մենեքեան՝ Անդամք Գրիգորեանի-հպատակք«։

Կատակ այս հանդուցելոյն 'ի Տէր՝ ԿԱՅՍԵՐ, այսչափ նշանաւոր, գրեալ է ամենայն լրիւ 'ի Եմին խակ Ինքեանէ յանպատրաստից, առանց կանխագիծ պաղափարի, ըստ թելադրելոյ և եթ հոգւոյն՝ որում լցեալն էր։ Նայց և ըստ նոցին խակ թելադրութեան՝ երբու յատուկ լմն դիտմամբ պահեալ է Նա 'ի պէտս վերջին յօդուածոյ զգծագրութիւնն՝ որք առաւել քան զամենայն և հաստատագոյն ևս յանդիման կացուցանեն զՆորա զանպատատ հոգւոյն զբաւանդակ շարժմունս, զՀոգւոյն ասեմ՝ որ ջերմագունիւ լուսաւորեալ

էր Հաւատով, և Բրիստոնէականաւն առլցեալ ճըշմարիտ հեղութեամբ։

»Շնորհ ունիմ, ասէ Թադաւորն (՝ի յօդ. 31), »ամենեցուն՝ զԱն սիրողաց, ծառայողացն Ինձ։ Կե»ցիմ՝ որոց զԱն ատելին«։

»Խնդրեմ՝ (՝ի յօդ. 32) յամենեցունց՝ ներել Ինձ, »եթէ զոք յանպէտս վշտացուցեալ ինչ իցէ Իմ։ Այլ »և Նա մարդ՝ ոչ զերծ՝ ի լծելութեանցն և՝ ի տկա»րութեանց՝ ընդ որովք անկեալ կան մարդիկ։ Ո՞ա»նայի ուղղիլ յա՛յնմ՝ զոր գիտայի զոլ անձին իմում՝ »ոչ բարւոք։ Յոմանս յաջողեցայ, յայլսն՝ ոչ։ Խընդ»րեմ՝ անկեղծութեն՝ լծողուլ Ինձ«։

»Սեռանիմ Նա (՝ի յօդ. 33) զոհ սրտիւ յա»զագս բարեայն՝ որովք հաճեցաւ Աստուած վար»ձատրել զԻս՝ հանդէպ Բոցավառեալ ոչխարաց»Սէր Ոչխարաց, որում ծառայեցի ըստ չափու իմայա»կանիս գիտութեան՝ հաւատով և ճշմարտութեամբ։ »յաւիտ՝ զի չեղէ ձեռնհաս՝ ի կատար ածել զբարին՝ »որոց ցանկայի՝ ի սրտէ։ Օ՜իմ տեղ կալցի Որդին իմ։ »Աղաչեցից զԱստուած՝ զի օրհնեսցէ զՆա՝ ի տաժա»նաշատն ասպարիզի՝ յոր մտանէ, և կարողացուսցէ »զՆա՝ հաստաբեստ կանգնել զՈուսիա՝ ի վերայ »անսասանելի հիման երկիւղի Աստուծոյ՝ զներքինն »հաստատելով՝ ի նմա կարգս, և՝ ի բաց վտարելով »զ՝ի դրուստ վտանգն«։ — Ի՛նչ ՀԷՂ Տ՛էր յոյսոյսդ, ո՛ »ամաչէսցես յոյսդ«։

»Խնդրեմ (Ի յօդ. 34 և վերջին) յամենեցունց՝
»որք զԱն սիրէին, աղօթս առնել վասն Հանդատեան
»հոգւոյ Իմոյ զոր աւանդեմն Ի ձեռս Գ.թասիրին
»Աստուծոյ՝ յուսալով յողորմութիւն Նորա, և Ի
»կամս Նորա յանձն լինելով հնազանդութեամբ.
»Ամէն«։

Ի կտակագրի անդ յուրոյն տոմսակի, զինի կարդադրութեանցն կցորդելոց ընդ յիշատակութեանն որ յաղագս ոմանց պատկերաց Սրբոց, թադաւորն նշանակէ Անդամոց Օգոստափառ Տան Իւրոյ՝ և այլոց մասնաւոր անձանց (յորոց կարգի՝ և Սենեկապանաց Իւրոց) պարգևս յիրացն՝ սեպհական Իւր եղելոց։ Այն ամենայն իրք գրեթէ չունին ինչ մեծագոյն արժէս. սակայն գիտէր Որ պարգևէրն, թէ որք ընդունիցին զայս Ի ձեռանէ Իւրմէ, այսպէս ասասցուք, թէ և զինի վախճանին, մեծ ինչ և թանգագին ունին համարել՝ առանց Ի նիւթականն հայելոյ յառաւել կամ Ի նուազ արժանաւորութիւն նոցին։ Ի կատարածի տոմսակիս ԲՈՐԷ ԵՎ ԼԱԽՈՒՆՅԱՆՑ, ԶԿՈՒՆԷՍ ԼԱՉԻՆ Իւրոյ՝ որչափ հնար ևցէ՝ առնէլ պարզ և անպատճոյճ, և զժամանակն սգալոցեցութեան համառօտել. ուր և միանգամայն յայտ առնէ, թէ Իւր ցանկութիւն է՝ Լաչին Ի Լիկոնց հուսէ շինմի Հօրն Իւրոյ առ ոչնոմ, այնպէս՝ զի առնիցէ Իւր տնասցէ փէշի վասն Եղեռնին։

Բայց յայտանէ, Ի լրումն կտակաւ աւանդութեանցն, կամ՝ ըստ թագաւորին առելոյ՝ Ի բայա-

յայտուն վերջին ցանկութեանց Նորա, յաւելեալ կայ և այլ առանձին յօդուած գրեալ 'ի 1845 ամի (*)։

Ընդօրինակեմք զայն 'ի սկզբանէ ցաւարսն.

»'Ի 29 Յուլիսի 1844 ամի, հաճոյ եղև Աստուծոյ »կոչել առ Ինքն զսիրելագոյն դուստր Սեր զԱլեք»սանդրա։ Խոնարհեալ Սեր առաջի անհասանելի կա»մայ Նորա՝ տանիմք անտրտունջ հարուածոյս այս»միկ. զի եթէ 'ի Նորա կամաց եղև այն, յոյս հաս»տատուն ունիմք՝ թէ եղև առ 'ի բարիս, և թէ՝ Նա »(Հանգուցեալն) առ Իւրումն Ստեղծողի ցնծալից ևս »է, քան թէ 'ի մոտի յայս կեանս։

»Սաղթեմք 'ի Տեառնէ պահել Սեղ զայլ սի»րայինն Սեր«։

»Առձեռն պատրաստ դրամագլուխն՝ որ 'ի 11 յո»դուածի նշանակեալ էր 'ի բաժին երեցունց դստե»րաց Իմոց, բաժանեսցի այժմ դստերաց Իմոց՝ Սա»րիայի և Օլգայի, հաւասարաչափ«։

»Օգիրն նշանակեալս կանխաւ վասն դստեր Իմոյ »Աւեքսանդրայի՝ թողում Որդւոյ Իմում Աւեքսանդ»րի՝ տնօրինել զնարդ և 'ի դէպ դատեսցի«։

»Զդրուագաւոր դրոշմածն (**) և զկնիքն, զոր »հանգուցեալ դուստրն Իմ ընծայեաց Ինձ 'ի մա-

---

(*) Յ3 Մարտի։

(**) Медальонъ.

»Հիշս մահուան, թողում կտակաւս Կնոջ Իմում,
»և յետ Նորա՝ Որդւոյս Ալեքսանդրի«։

»Օգնականագիր դառեր Իմոյ Ալեքսանդրայի՝ որ
»կայ 'ի վերայ սեղանոյ, թողում հիւանդանոցին՝ որ
»առ յիշատակի Նորա կառուցանի«։

Յընթեռնուլ մեր զմորմոքիչ բանս այսր յաւելուածոյ և զբուն իսկ կտակի՝ յուշ բերաք զբանն Բարամզինայ զգեղեցկախօսին 'ի մերոյ Պատմագրաց, զոյն՝ զոր ասէ Նա վասն կտակի միոյ ուրուճ 'ի մեծաց Թագաւորաց հնոյն Ռուսաստանի՝ ցմեզ իսկ ժամանելոյ. »Առանց այսր կտակի, այս բան է Նորա, չմարթէաք մեք զբովանդակն գիտել զհանգամանաց հոգւոյ Սոնոմախայ«։ Օրինակ զոյս և այնք 'ի մարդկանէ՝ որք անաչառաբար միտ եդեալ զննէին զամենայն զգործս ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ յընթացս երեսնամեայ թագաւորութեանն, և այնք դարձեալ՝ որոց ընտանեկանն Նորա յայտնի էր կենցաղ (այն՝ որ մասնաւոր անձանց անգամ օրինակամատոյցն էր և հրահանգիչ) կարեն արդ իսկ և՝ յետ զմերս զայս վերծանելոյ զանարուեստ՝ բայց զհարազատ և զլիակատար՝ քաղուած յԱնդարձապէտ անտի Նորա, քաջ և ես գիտել և քաջ և ես կըշռել զարժէս զչքնաղեցն Նորա բարեմասնութեանց հոգւոյ, որ զոյգ ընդ համբոյր բարուց՝ զվեհանձնականն բերէր հաստատութիւն մտաց։

Այսպիսի ինչ արար 'ի մեզ ազդեցութիւն՝ անուանեալն 'ի մէնջ Ներքին խօսակցութիւն Նորա ընդ

Ընձին, և թողումք իսկ զԹրկչին մերոյ առ 'ի յերկնուստ զբարբառն լսել։

»Եղբարք՝ պիտոյին՝ զի ոչ-ք էր ոչխար, զի հոգաս զԱ-ռաքելոյ ասէր։«

(Առաք. Է. 8)։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
ՀԱԽՀ-СССР А.
ԱՄ. А МЯСНИКЯНА
Ի ՍԱՍՈՒՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

'Ի 24 Մարտի 1855 ամի։

ԳՐԻՊ· ՏՊԱՏՐ·

Լ՝Ջ·	Տող·		Ո–ղղէ՝ալչ։
9.	5.	գամի մի·	գամ՞ մի։
—	15.	՝ի մարմի·	՝ի մարմնի։
10.	21.	ինքին·	ինքնին։

969

2013